

յորջէն իւրմէ խրտեցուցեալ Հանիցենն ի հրապարակս եւ ինքեանք ի բացեայք եղեն, չքմեղիկս ձեւանալով, ըստ բանի Տեառն Յօհ. 20, 12: Մանաւանդ թէ լալին ասէ, զի պարծան թէ զայն իսկ արարին:

Եւ զմերն զհարդութիւն յանձնիցուք ի յԱտուած՝ աղօթիւք սրբոց իւրոց զի ի յամենայնից կողմանց շնորհիւ Տեառն զյանդորրութիւն ունիմք: Եւ ի յանցելում Վիւրակէի զվեցերորդ աստիճան Սարկաւազութեան ետու Գօլէճու երկու որդեկացն, այսինքն թասպազ Յօհաննիսին եւ Պէրխուտարէնց Յովսէփին: Այլ եւ յոյժ յաւէտապէս ուրախացայ վասն ազատելոյդ զձերունի Յօհաննէս վարդապետ հայրն մեր ի յայն աշխատահոծ գործառութենէն: Քանզի արդէն նա զբարւոյր պատերազմն պատերազմելով զընթացս իւր կատարունակեալ է, եւ յուսամ թէ այսուհետեւ կայ եւ մնայ նմա արդարութեան պսակն, եւ այլն:

Վերջապէս բնաւից միակրօնից եղբարց, ի Սրբանոցի այդր սրբասնելոց, ըստ իւրաքանչիւր աստիճանի ողջոյն մատուցանեմ: Յանձնելով զիս ի յաղօթս նոցին, որ եմ ըստ ամենայնի պարտական, եւ պատրաստական ծառայ ձեզ ծառայիցդ Ատուծոյ:

Սարգիս Արքեպիսկոպոս Աեսարիոյ

Յամի 1746 ի Փետրվ. 12, ի Հռոմ:

Եւ եթէ գիր ինչ եկեալ իցէ, եւ կամ այսուհետեւ գայցէ վասն իմ ի Վ. Պօլսոյ, շուտով առ իս առաքելն՝ աղաչեմ:

Այս 1746ին ի Հռոմ հինգ երանելի անձանց սրբացուցման հանդէսը պիտի կատարուէր, եւ ամէն կողմանէ կաթողիկեայ եպիսկոպոսներուն կարծիքը կը հարցուէր: Սրբազան Քահանայապետը հարցուց նաեւ Սարգսի կարծիքը,